Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

Խոսք հեղինակի

Օգտվելով իմ այս նոր վեպը լույս ընծայելու պատեհությունից, պարտք եմ համարում հրապարակավ իմ անկեղծ շնորհակալությունը հայտնել «Խողեղան» վեպիս առթիվ ինձ ժամանակին շնորհավորած բոլոր ընթերցողներին ու բարեկամներին, որոնց ի վիճակի չեմ եղել առանձին նամակներով իմ երախտիքը հայտնել:

Շնորհակալություն նաև առանձին արժեքավոր դիտողությունների համար, որոնք սիրով ի նկատի են առնված այս վեպը գրելիս:

Նոր վեպի համար օգտագործել եմ մայր հայրենիքում և սփյուռքում լույս տեսած որոշ հուշագրություններ, ականատեսների վկայություններ և պատմական ու աշխարհագրական աշխատություններ, դրանցից իբրև ատաղձ ընտրելով բացառապես այն դրվագները կամ եղելությունները, որոնք առնչվում են իմ ընտրած նյութին:

1952 թվականին, երբ ես Իրինդ գյուղում էի, երևելի շինական Գալուստ Քոթանյանը (ափո Գալուստ) իր հարկի տակ դիմելով ինձ՝ ասաց.

Շատ ուրախ եմ «Խողեղանի» համար: Շատ ձորերի գլուխը մի ձոր է, շատ խոսքերի գլուխը՝ մի խոսք. էնպես արեք, որ մեր հետքերը չընկորչեն:

1963-ի հունիսի 2-ին Ներքին Թափն գյուղում ես հանդիպեցի «Խոդեդան» վեպիս հերոսներից մեկին՝ Գոմսա Մելիքի կնոջը: Նա ասաց. «Մելիք հարիր տարեկան կեղներ, որ մեռավ: Թալինու բժիշկ մեկ օր Մելիքին տեսնելով՝ ասաց. «Մելիք ջան, դու քու ուժից ես էսքան երկար ապրել: Չաթալ օսկոր կա քու սրտի մեջ ու չորս պլոհիկ»:

Իմ այս վեպը իրենց սրտի մեջ «չաթալ օսկոր» և «չորս պլոճիկ» ունեցող այդ սերնդի մասին է:

Այդպիսի սերունդ եղավ, այդպիսի սերունդ դժվար թե կրկնվի:

Այնքան արտասովոր և առասպելական էին այդ սերնդի մարդիկ և իրենց գործերը, որ թեև այս վեպի ամբողջ նյութը իրական է, կատարված եղելություն, բայց ոմանց կարող է թվալ անիրական և. հեքիաթային:

Այդ մարդկանց անուններն ու գործերը հյուսվել են լեգենդին, հեքիաթին, առասպելին և սերնդե-սերունդ անցնում են բերնեբերան:

Նրանք խումբ-խումբ եկան և լցվեցին այս վիպասանության մեջ, ոմանք իրենց անուններով, մի քանիսն էլ անունները փոխած: Ու դարձյալ հին, չարքաշ, բայց տոկուն հայ շինականն էր, որ ելավ իմ առաջ: Ամեն մեկը բերեց մի հերոսական դրվագ կամ եղելություն իր կյանքից և հյուսեց այս գիրքը: Գրքի ամեն մի գլուխը մի առանձին պատում է կամ պատմվածք, իսկ բոլորը միասին՝ մի ամբողջական վեպ:

Սակայն ավելի լավ է խոսքը տանք վեպի գլխավոր հերոսին. «Այսպես ուրեմն, ես ձեզ կպատմեմ իմ և իմ սերնդի կյանքը, ինչպես nr եղավ և ինչպես nr անցավ: Ես ձեզ կտանեմ այնպիսի վայրերով, ուր չեք եղել: Իմ ետևից եկեք: Ես մերթ թամբին նստած կերթամ, մերթ թամբից իջած: Որտեղ հոգնեցինք՝ այնտեղ կանգ կառնենք:

Այդ ո՞վ է բռնել նժույգիս սանձը: Ա՛, բռնաշենցի, դու նորի՞ց հայտնվեցիր Սիմ լեռան լանջերին: Ուղղակի խենթ ես դու, nr այդքան կանուխ շտապել ես ինձ մոտ: Լուսաբացի ցողը ոտքերիս վրա է, և դեմքիս փչում է մի հահելի զեփյուռ: Եկ

գնանք ինձ հետ: Հոգ չէ, մենք երկուսով ճանապարհ կմեկնենք, մինչև հաջորդաբար հանդես կգան ինքը Շապինանդը և Պայթող աղբյուրի հերոսները:

Գոնե թույլ տուր ինձ վերջին անգամ Մելքոն վարժապետի դասը լսեմ»:

Երևան, 1972, 10 օգոստոսի